ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

«Կոշտ թափոնների տեղական կառավարման պանավորման ուղեցույցի մշակում» ծրագիր

Շահառուների ներգրավման վերաբերյալ զեկույց

«Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման
պլանավորման ուղեցույցի մշակում
և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման
կարիքների գնահատում»
ծրագիր

Պատրաստել են «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետները:
Մարտի 5, 2021 թ.

Սույն ծրագիրն իրականացվել է ՀԱՀ Քաղաքականությունների մշակման և հետազոտությունների հիմնադրամի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեդիայի կառավարության կողմից՝ ՀԱՀ և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Հետազոտության մեջ արտահայտված տեսակետները և կարծիքները միայն հեղինակներինն են, և չեն արտացոլում կողմերից որևէ մեկի պաշտոնական քաղաքականությունը կամ դիրքորոշումը:

Ծրագրի կայքէջ՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines

Բովանդակություն

Ներածություն 4

1. ՀՀ օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցակարգերի վերլուծության զեկույցի քննարկման արդյունքներ 5

1.1 Հիմնական խնդիրների քննարկման արդյունքներ 5

1.2 Այլ խնդիրների քննարկման արդյունքներ 8

2. Մշակված ԿԹ տեղական կառավարման ուղեցույցի աշխատանքային նախագծի քննարկման արդյունքներ 11

1.3 Քննարկման ձևաչափ և մեթոդաբանություն 11

1.4 Ուղեցույցի գիահատման վիճակագրական արդյունքներ 11

1.5 Մասնակիցների առանձին դիտարկումներ 12

1.6 Եզրահանգումներ 13

3. Վերապատրաստման կարիքների գնահատման (ՎԿԳ) բովանդակության և կառուցվածքի քննարկման արդյունքներ 14

Հավելված Ա – Շահակիր կողմերի հանդիպման օրակարգ 15

Հավելված Բ – Վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար 17

Ներածություն

Ծրագրի շրջանակներում փետրվարի 26-27-ին Աղվերանում տեղի ունեցավ բազմաշահակիր կողմերի հանդիպում, որը կազմակերպել էր ծրագրի թիմը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անմիջական համակարգմամբ:

Հանդիպման հիմնական նպատակն էր ներկայացնել և քննարկել փորձագիտական թիմի մշակած փաստաթղթերը՝ բազմաշահակիր կողմերի դիտարկումներն ու առաջարկությունները ստանալու ակնկալիքով:

Խոսքը վերաբերում է հետևյալ փաստաթղթերին՝

- կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի (այսուհետ՝ Ուղեցույց) աշխատանքային նախագիծ,
- կոշտ թափոնների տեղական կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցակարգերի վերլուծության զեկույց,
- վերապատրաստման կարիքների գնահատման (ՎԿԳ) նախնական բովանդակություն ու կառուցվածք:

Հանդիպման օրակարգը ներկայացված է Հավելված Ա-ում:

Հանդիպմանը ներկա է գտնվել 32 մասնակից՝ Երևանից և 9 մարզերից՝ բացի Սյունիքից: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է մասնակիցների թիվն ըստ մարզերի և հաստատությունների:

Մարզ	**Համայնք**	**Համայնքապետարան**	**Մարզպետարան**	**Փորձագետ**	**Ընդամենը**
Կոտայք	Հրազդան, Չարենցավան	2	1		3
Շիրակ	Ախուրյան Գյումրի	2			2
Տավուշ	Իջևան	2	1		3
Արմավիր			2		2
Արարատ			1		1
Լոռի		2	1		3
Գեղարքունիք	Վարդենիս	2	1		3
Վայոց Ձոր			1		1
Արագածոտն		1	1		2
	Երևան	3			3
ՏԿԵՆ					1
Փորձագետներ				8	8
					32

Ստորև ներկայացված է հանդիպման քննարկման արդյունքների վերլուծությունը:

1. ՀՀ օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցակարգերի վերլուծության զեկույցի քննարկման արդյունքներ

Աշխատաժողովի ժամանակ բովանդակային քննարկում տեղի ունեցավ մասնակիցների հետ, որոնք մասնավորապես առնչվում էին Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման և համայնքի կողմից մատուցվող աղբահանության ծառայության պատշաճ մատուցմանը կամ այդ լիազորության իրականացմանը:

1.1 Հիմնական խնդիրների քննարկման արդյունքներ

1.1.1 Ռազմավարական մոտեցումներ

Աշխատաժողովի մասնակիցները կարևորեցին թափոնների կառավարման, ներառյալ աղբահանության ոլորտում **համապարփակ գիտելիքահենք և փաստահենք,** երկարաժամկետ հայեցակարգային/ռազմավարական փաստաթուղթ ունենալու անհրաժեշտությունը: Օրինակներ ներկայացվեցին այլ երկրների փորձից՝ հղում անելով ծրագրի շրջանակներում իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության փաստաթղթին: Վեց երկրների փորձը ցույց է տալիս, որ պետության մակարդակով ընդունվել են թափոնների կառավարման ազգային ծրագրեր, հայեցակարգեր, քաղաքականության և ռազմավարության փաստաթղթեր:

Աղբահանության (թափոնների կառավարման) ազգային համապարփակ ռազմավարության մեջ հատկապես պետք է հաշվի առնվեն անցյալի դասերը, ժողովրդագրական տվյալները, մարդկանց նյութապաշտական արժեհամակարգը և այլն: Կարևորվեցին աղբի կրճատման/կանխարգելման, վերօգտագործման և վերամշակման հարցերը:

Մասնակիցները համաձայնեցին, որ ռազմավարության մեխը պետք է լինի կանխարգելիչ վարքագիծը և աղբի պատշաճ կառավարման համակարգը, և այն պետք է հիմնված լինի գիտելիքի, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և հայաստանյան իրականության փաստահենք հետազոտությունների վրա:

1.1.2 Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներ

Հստակ սահմանված չեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները թափոնների կառավարման, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման բնագավառում:

Քննարկման ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մտահոգություն հայտնեցին առ այն, որ իրենցից երբեմն պահանջում են անել ավելին, քան իրենք լիազորված են օրենքով:

Հաճախ մարզպետարանների և պետական կառավարման տարբեր կառույցների ներկայացուցիչները նրանցից ակնկալում են այնպիսի գործողություններ, որոնք սահմանված չեն օրենքով: ՏԻՄ-երի հետ հարաբերություններում այդ մարմինները դրսևորում են վերադասի վարքագիծ հատկապես վերահսկողական հարցերում, ինչպես նաև պահանջում են այնպիսի տեղեկություններ, որոնց տիրապետողը ՏԻՄ-երը չեն:

Խնդիրներ են ծագում՝ կապված վտանգավոր թափոնների վնասազերծման և անվտանգ վայրերում դրանց տեղակայման հետ. սրանք հիմնականում դուրս են համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակից:

Մասնակիցները կողմ էին ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայմանը՝ դրա կառավարմանը մասնակից բոլոր սուբյեկտների լիազորությունների իրավական սահմանները հստակեցնելու առումով՝ հիմք ընդունելով ԵՄ լավագույն փորձը և ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից բխող պահանջները:

Սույն հարցի հետ կապված՝ աշխատաժողովի մասնակիցները կողմ էին նաև իրավական վերլուծության մեջ արված առաջարկությանը, այն է՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» երկու օրենքների փոխարեն «Թափոնների կառավարման մասին» մեկ միասնական օրենք ընդունելուն: Այդտեղոչ միայն կսահմանվեն ոլորտը կարգավորող բոլոր հասկացությունները, այլև կկարգավորվեն համանման հարաբերությունները , որը հնարավորություն կտա ապահովելու իրավական նորմերի պատշաճ կիրառումն ու պաշտպանությունը:

1.1.3 «Աղբահանության ծառայություն» և «սանիտարական մաքրում» հասկացությունները

Աշխատաժողովում մանրամասն քննարկվեցին «աղբահանության ծառայություն» և «սանիտարական մաքրում» հասկացությունները, համայնքների ռազմավարական պլաններում դրանց նկարագրության կարևորությունը:

Մասնակիցները շեշտեցին, որ հատկապես դժվար է հավաքել տեղական վճարները այն անձանցից/բնակիչներից, որոնց ծառայություն չեն մատուցում: Տեղական վճարների դեպքում օրինական չէ աղբահանության ծառայության մատուցման պայմանագրեր կնքելը, սակայն կնքված պայմանագրերի դեպքում պայմանագրի կողմերը հստակ գիտեն իրենց իրավունքները և պարտականությունները:

Պայմանագրեր կնքելուն մասնավորապես դեմ էին Երևանի և խոշոր համայնքների ներկայացուցիչները: Աշխատաժողովի մասնակից համայնքների ներկայացուցիչները նշեցին, որ որևէ համայնք չունի ներքին իրավական ակտով հաստատված կանոններ, որոնցով կարգավորվելու են բնակիչ-համայնք վարչական հարաբերությունները աղբահանության ոլորտում:

Մասնակիցների հետ քննարկվեցին ոչ միայն թափոնների հավաքման, այլև վերօգտագործման, վերամշակման հարցերը: Բոլորը միանշանակ համաձայնեցին, որ պետք է կրճատել/նվազեցնել աղբի գոյացումը, և կարևորեցին Կառավարության բացառիկ դերը այդ հարցում:

Աղբահանության ծառայության իրավակարգավորումները պետք է նկարագրեն տվյալ բնագավառում ՏԻՄ-ի վարքի առարկան (գործողությունների շրջանակը), օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, պատասխանատվությունը և այն արդյունքը, որը օգուտի տեսքով ստանում է առանձին քաղաքացին կամ ամբողջ հասարակությունը ինչպես նաև արտահայտեն քաղաքացիների ու ծառայություններ ստացող այլ սուբյեկտների գոհունակությունը մատուցված ծառայություններից: Մանրամասն խոսվեց այդ ծառայության նկարագրության որակական և քանակական հատկանիշների մասին:

1.1.4 Թափոնների կայուն կառավարման բաղադրիչներ

Գրեթե բոլոր մասնակիցները շեշտեցին, որ իրենք իրականացնում են միայն աղբի հավաքում, տեղափոխում և տեղադրում աղբավայրում: Համայնքների մի մասը առանձնացնում է պլաստիկ շշերը և պահեստավորում կամ վաճառում, իսկ Երևանի Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում միայն վերջերս են տեղադրվել թղթի, ապակու և պլաստիկի տարանջատման աղբարկղեր, և ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացնում են փորձնական ծրագրեր: Որոշվեց հետևել դրանց ընթացքին և փորձի հաջողությամբ կիսվել այլ համայնքների հետ:

1.1.5 Կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորում

ՀՀ գործող օրենսդրությունը ՏԻՄ-երին չի պարտավորեցնում ունենալ աղբահանության կառավարման ռազմավարական պլան, սակայն համայնքի ավագանին պետք է հաստատի համայնքի սանիտարական մաքրման սխեման: Արդյունքում մեծաթիվ համայնքներում բացակայում է աղբահանության կամ թափոնների կառավարման ռազմավարական պլանը կամ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ընդունված՝ համայնքի վարչական տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման կարգը/կանոնները:

Աշխատաժողովի մասնակիցները համաձայն էին ունենալ այդպիսի պլաններ, եթե ՏԿԵՆ-ը աջակցի համայնքներին աղբահանության ծառայության ինքնարժեքի հաշվարկման, աղբի կազմի որոշման և այլ հարցերում, որովհետև դրանք չունեն համապատասխան ռեսուրսներ նշված գործողությունները կատարելու համար: Եթե օրենսդրությամբ ամրագրվի, որ թափոնների կառավարման ռազմավարական պլաններ ունենալը պարտադիր է, այսինքն՝ օրենսդրական պահանջը իմպերատիվ է, ինչպես նաև համայնքներին ցուցաբերվի անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ ուղեցույցների և այլ տիպային ձևերի ներդրմամբ, ապա դրանք նորովի կվերագնահատեն իրենց լիազորությունները և գործառույթները տվյալ ոլորտում և վերանայված մոտեցմամբ կկազմակերպեն ծառայության մատուցումը:

1.1.6 Համայնքի դերը աղբի կառավարման գործընթացներում

ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված չէ համայնքի դերը. այն ոչ միանշանակ է ընկալվում: Հասկանալի չէ՝ համայնքը աղբահանության ծառայություն մատուցո՞ղ է (երբ աղբահանությունն իրականացվում է համայնքային ՀՈԱԿ-ի կամ այլ կառույցի կողմից), թե՞ աղբահանության ծառայություն մատուցողների վերահսկողություն իրականացնող (երբ ծառայությունը մատուցվում է այլ համայնքի կամ առևտրային կազմակերպության կողմից):

1.1.7 Տվյալների հասանելիություն և հավաքում

Առանձին քննարկման առարկա են դարձել թափոնների կառավարմանն առնչվող տվյալների հավաքման, դասակարգման, արխիվացման, ինչպես նաև աղբահանության ծառայության նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման հարցերը: **Չկան հստակ մեթոդաբանություն և չափորոշիչներ, չկա տեղեկատվական բազա, չկան համապատասխան կառույցներ, որոնք օրենսդրությամբ պարտավոր են մշտադիտարկել, վերլուծել հավաքված տեղեկատվությունը և ներկայացնել օրենսդրության բարելավման կամ ինստիտուցիոնալ զարգացման գիտելիքահենք և փաստահենք առաջարկություններ:**

1.1.8 ԿԹ կայուն կառավարման խրախուսման մեխանիզմներ

Մասնակիցները քննարկեցին աղբահանության ծառայության մատուցման, աղբի պատշաճ կառավարման խրախուսման վարկային և հարկային արտոնյալ մեխանիզմների ներդրման կարևորությունը, ինչպես նաև պատասխանատվության ֆինանսական լծակները:

Բոլորը համաձայնեցին, որ պետք է հիմք ընդունել միջազգային լավագույն փորձը, ներդնել գործուն ֆինանսական խրախուսման մեխանիզմներ և լծակներ: Մասնավորապես խրախուսել.

- աղբը տեսակավորողներին/տարանջատողներին,
- աղբը վերամշակողներին,
- լավագույն նորագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով աղբի ծավալները կրճատողներին,
- աղբը ինքնափոխադրողներին,
- աղբի կոմպոստացում իրականացնողներին,
- տարանջատված աղբի հավաքման կետեր ստեղծողներին,
- աղբի տարանջատում և վերամշակում իրականացնող համայնքներին ֆինանսական համահարթեցման կամ նպատակային սուբսիդավորման/սուբվենցիոն ծրագրերի իրականացման ձևով և այլն:

Կարևորվեց նաև աղբավայր հեռացվող թափոնների քանակի կրճատումը համապատասխան քաղաքականության միջոցով: Դրա հիմնաքարը պետք է լինի հարկային բարենպաստ իրավական դաշտի ձևավորումը, օրինակ՝ աղբահանության ծառայության մատուցմամբ զբաղվող ընկերությունների՝ ԱԱՀ-ից ազատում, շահութահարկի նվազեցում, պատշաճ բնապահպանական վճարների սահմանում:

1.1.9 Իրավախախտումներ և պատասխանատվություն

Օրենսդրորեն ամրագրել պատասխանատվություն, այդ թվում՝ ֆինանսական ներգործության կոնկրետ միջոցներ՝ ըստ սուբյեկտների մեղքի և պատասխանատվության չափի, հատկապես.

- աղբի բաց այրման համար,
- սահմանված կարգով աղբահանության ծառայություն չմատուցելու համար,

- աղբը չսահմանված վայրերում (օրինակ՝ մայր ջրանցքների, ջրային այլ օբյեկտների մեջ) թափելու հետևանքով բնությանը և մարդկանց առողջությանը հասցված վնասի համար և այլն,
- առանց պայմանագրի, սեփականության իրավունքով այլ համայնքի աղբավայրերից օգտվելու համար:

Աշխատաժողովի ժամանակ հատուկ քննարկման առարկա են դարձել ՎԻՎՕ-ի 43.1 հոդվածի կիրարկման հարցերը (Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը):

Բոլոր համայնքները ընդունեցին, որ իրենք խուսափում են այդ հոդվածի դրույթներին համապատասխան վարչական վարույթներ հարուցելուց, վարչական ակտ կազմելուց և պատասխանատվության միջոցներ կիրառելուց, հատկապես դատական կարգով:

Երևանի քաղաքապետարանը չի դիմում դատարան վերոհիշյալ հոդվածում սահմանված հիմքերով, այլ փորձում է իրավախախտումը վերացնել սահմանված մեկօրյա ժամկետում՝ համարելով այն շատ կարճ ժամկետ: Գյումրու քաղաքապետարանը ավելի շատ կիրառում է հասարակական ներգործության, քան վարչական միջոցները, օրինակ՝ մարզային հեռուստաընկերություններով հասարակական պարսավանքի է ենթարկում իրավախախտում թույլ տված անձանց: Մյուս համայնքները նույնպես չեն արձանագրել որևէ հաջողություն վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերում (ոչ միայն ֆիզիկական անձանց, այլև իրավաբանական):

1.1.10 Աղբավայրի մուտքի վճար (gate fee)

Առաջարկ եղավ սահմանել **«աղբավայրից օգտվելու վճար»** հասկացությունը: Մասնավորապես Ալավերդի համայնքի ղեկավարը ներկայացրեց իր համայնքի իրական դժվարությունները՝ կապված աղբավայրի շահագործման և կառավարման հետ: Այն համայնքները, որոնք իրենց հավաքած աղբը պետք է տեղադրեն Ալավերդի համայնքի աղբավայրում, չեն ուզում վճարել աղբավայրի շահագործման և կառավարման համար: Չկան սահմանված իրավական գործուն մեխանիզմներ տվյալ հարաբերությունը պատշաճ կարգավորելու համար:

1.2 Այլ խնդիրների քննարկման արդյունքներ

Աշխատաժողովի իրավական և աղբահանության ոլորտին վերաբերող այլ հարցերի բովանդակային քննարկումների և մտքերի փոխանակության արդյունքում ձևավորված ընդհանուր եզրահանգումներն այսպիսին էին.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մոտարկել և ներդաշնակեցնել Եվրոպական Միության և միջազգային չափանիշներին՝ հաշվի առնելով մեր երկրի՝ միջազգային կառույցների նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

2. Հստակ սահմանել աղբի, թափոնների բոլոր հնարավոր տեսակները, դրանց տեսակավորմանը, հավաքմանը, պահմանը և տեղափոխմանը, օգտահանմանը, վերամշակմանը և աղբավայրերին ներկայացվող պահանջները, կոնկրետ ու որոշակի պատասխանատվություն սահմանել աղբավայրերի շահագործման համար և տարանջատել ու կոնկրետացնել առանձին սուբյեկտների պատասխանատվության շրջանակը:

3. Օրենսդրորեն ավելի լայն հնարավորություն տալ համայնքներին՝
   - ընդունելու համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր,
   - սահմանելու սակագներ (Գործող օրենքում թափոնների սակագնի համար կա շեմ, որը նշանակում է, որ օրենքը պետք է պարբերաբար վերանայվի՝ գնաճի հետ համահունչ լինելու համար: Ավելին, սակագնի սահմանման դեպքում հաշվի չեն առնվում համակարգի

արդիականացումը, հիմնական բարեփոխումները և այլ կենսական հարցեր, ինչպիսին կարող է լինել համայնքների խոշորացումը:),

- նախատեսելու արտոնություններ սոցիալական տարբեր խմբերի համար, ինչպես նաև կիրառելու վարչական պատասխանատվության և այլ ներգործության միջոցներ իրավական ակտերի պահանջները չկատարող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերի, ՀՀ Սահմանադրության և ոլորտը կարգավորող օրենքների պահանջները:

4. Վարչարարության մեխանիզմները և կառուցակարգերը պետք է լինեն հստակ, լավ մտածված, իրավաչափ, իրատեսական, կիրառելի ու չափելի:

5. Ուժեղացնել ներկայում գործող օրենքների, ՀՀ Կառավարության որոշումների և սեփական իրավական ակտերի կատարման հսկողությունը: Այն դեպքերում, երբ համայնքի ղեկավարը իրավասու չէ կիրառել պատժամիջոց շրջակա միջավայրի պահպանության կամ սանիտարական կանոնների խախտման համար, հանդես գալ հաղորդումներով և դիմել լիազոր մարմիններին պատժամիջոցների կիրառումն ապահովելու համար:

6. Պետք է խստորեն հետևել ընդունված ռազմավարություններին, ՀՀ օրենքների պահանջներին և ընդհանրապես Հայաստանի վավերացրած միջազգային համաձայնագրերի պահանջներին ու ՀՀ ստանձնած պարտավորություններին:

7. Կազմակերպված և համակարգված մասնակցել Հայաստանի Հանրապետության թափոնների կառավարման ոլորտի հայեցակարգային, ռազմավարական, իրավական ակտերի նախագծի մշակման և քննարկման աշխատանքներին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անմիջական համակարգմամբ, որպեսզի հնարավոր լինի ընդունել այնպիսի իրավական ակտեր, որոնց համապատասխան կիրականացվի համայնքային շահերին վերաբերող և օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

8. Ստեղծել իրական մեխանիզմներ՝ խթանելու թափոնների կառավարման, շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միջազգային, միջպետական, պետական, մարզային, միջհամայնքային և ներհամայնքային ծրագրերի իրականացումը:

9. Ապահովել բարենպաստ և գրավիչ միջավայր աղտոտման կանխման, աղբի գոյացման կանխարգելման/կրճատման համար, ստեղծել կայուն մեխանիզմներ և մատչելի նորագույն տեխնոլոգիաներ թափոնների օգտահանման, ինչպես նաև երկրորդային հումքի վերամշակման համար: Երաշխավորել պետական աջակցությունը այդ նախաձեռնություններին:

10. Ապակենտրոնացնել վերահսկողությունը և համայնքի վարչական տարածքում աղբահանության, թափոնների գործածության, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և այլ հարակից ոլորտներում ամենամեծ պահանջատերը դարձնել համայնքի ղեկավարին՝ նրանից պահանջելով կրել նաև պահանջատեր լինելու պատասխանատվության բեռը:

11. Ապահովել հասարակության իրազեկված լինելու իրավունքը: Համայնքային հեռուստաընկերություններով ու այլ լրատվամիջոցներով համայնքի բնակչությանը ծանուցել օրենսդրության փոփոխությունների ու համայնքային նշանակության իրավական ակտերի նոր պահանջների մասին: Կատարել օրենսդրության պահանջները և իրազեկել համայնքի բնակչությանը կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ:

12. Ապահովել շարունակական էկոլոգիական կրթություն աղբի գոյացումը կրճատելու նպատակով, կարևորել աղբի տեսակավորումը, խթանել աղբի վերամշակման նախաձեռնությունները:

2. Մշակված ԿԹ տեղական կառավարման ուղեցույցի աշխատանքային նախագծի քննարկման արդյունքներ

Շահակիր կողմերի հանդիպման ժամանակ մասնակիցների հետ քննարկվել է ծրագրի փորձագիտական թիմի կողմից մշակված ԿԹ տեղական կառավարման ուղեցույցի 2-րդ աշխատանքային նախագիծը, որում տեղ էին գտել ՏԿԵ նախարարության ներկայացուցիչների դիտարկումների և առաջարկների հիման վրա արված լրամշակումները:

1.3 Քննարկման ձևաչափ և մեթոդաբանություն

Մասնակիցներին տրամադրվել է ուղեցույցի գնահատման ձևանմուշ, որը լրացվել է Ուղեցույցի 48 ենթաբաժիններից յուրաքանչյուրը ներկայացնելուց և քննարկելուց հետո: Ուղեցույցի ենթաբաժինները գնահատվել են ըստ երկու չափանիշի՝

- բարդության աստիճան լրացնելու/իրագործելու առումով,
- բարդության աստիճան անհրաժեշտ տվյալները հավաքելու առումով:

Բարդության աստիճանը որոշելիս մասնակիցներն օգտվել են հետևյալ սանդղակից՝

1 – շատ հեշտ,
2 – հեշտ,
3 – միջին բարդության,
4 – բարդ,
5 – շատ բարդ:

Ուղեցույցի յուրաքանչյուր ենթաբաժնի վերաբերյալ մասնակիցները հնարավորություն ունեին կատարելու նաև ընդհանուր բնույթի դիտարկումներ և նշումներ գնահատման աղյուսակի համապատասխան դաշտում: Ստորև ներկայացված է գնահատման աղյուսակի օրինակը:

Բարդության աստիճան լրացնելու/իրագործելու առումով (1-5)	
Բարդության աստիճան անհրաժեշտ տվյալները հավաքելու առումով (1-5)	
Այլ նշումներ	

1.4 Ուղեցույցի գհահատման վիճակագրական արդյունքներ

Ինչպես նշվեց, գնահատումն արվել է Ուղեցույցի 48 ենթաբաժինների համար: Պատկեր 1-ում ներկայացված են Ուղեցույցի ենթաբաժինների կիրառելիության գնահատման միջինացված արդյունքներն ըստ լրացման/իրագործման և տվյալների հավաքման բարդության աստիճանի: Պատկերից կարելի է անել մի քանի կարևոր հետևություն՝

- Ուղեցույցի ենթաբաժինների կիրառելիությունն ըստ լրացնելու (իրագործելու) բարդության աստիճանի միջինը գնահատվել է 2.74, այսինքն՝ միջին բարդության և ավելի հեշտ,

- Ուղեցույցի ենթաբաժինների կիրառելիությունն ըստ տվյալների հավաքման բարդության աստիճանի միջինը գնահատվել է 2.53, այսինքն՝ կրկին միջին բարդության և ավելի հեշտ,

- Ուղեցույցի բոլոր ենթաբաժինների դեպքում անհրաժեշտ տվյալների հավաքումը գնահատվել է որպես ավելի բարդ, քան ենթաբաժին լրացնելը: Բացառություն է *2.3.2 Դերերի և պատասխանատվությունների բաշխում տարբեր շահակիրների միջև պլանավորման ժամանակաշրջանում (դերերի վերանայում և վերաբաշխում)* ենթաբաժինը:

- Տվյալների հավաքման առումով որպես ամենաբարդ գնահատվել են այն ենթաբաժինները, որոնք կապված են թափոնների քանակի և բաղադրության վերլուծության հետ: Այնուամենայնիվ, դրանց բարդության աստիճանը գնահատվել է առավելագույնը 3.7, այսինքն՝ միջին բարդության կամ բարդ: Հարկ է նշել, որ այդ ենթաբաժինների վերաբերյալ մասնակիցներն արել են նաև առանձին նշումներ, որոնք բերված են ստորև: Այդ ենթաբաժինների թվում են՝
    - *1.3.4 Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը,*
    - *1.4.1 Թափոնների քանակներն ըստ հոսքերի և դրանց գործածության ձևերի,*
    - *1.4.2 Թափոնների բաղադրությունն ըստ բաժնեմասերի,*
    - *1.5.4 Վերօգտագործում և նախապատրաստում վերօգտագործման համար*:

- Երկու չափանիշների առումով որպես ամենահեշտ գնահատվել է *1.6.2 Թափոնների կառավարման ծառայություններից բնակիչների գոհունակության գնահատման եղանակ* ենթաբաժինը:



Պատկեր 1 - Ուղեցույցի կիրառելիությունն ըստ ենթաբաժինների լրացման/իրագործման և տվյալների հավաքման բարդության աստիճանի (1 – շատ հեշտ, 5 – շատ բարդ)

1.5 Մասնակիցների առանձին դիտարկումներ

Ինչպես նշվել էր, որոշ ենթաբաժինների վերաբերյալ մասնակիցներն արել են նաև թվով 9 առանձին նշումներ: Դրանքներկայացված են ստորև՝ ըստ ենթաբաժինների:

1.3.4 Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

- Վիճակագրական տվյալներն ունեն հավաստիության որոշակի աստիճան: [որպես խոչընդոտ]
- Իրավաբանական անձինք չեն բացահայտում իրենց արտադրած թափոնների տեսակները:
- Որպես կանոն՝ ձեռնարկությունները թաքցնում են [տվյալները]:
- Ձեռնարկությունները թաքցնում են [տվյալները]:

1.4.1 Թափոնների քանակն ըստ հոսքերի և դրանց գործածության ձևերի

- Հետագայում կարող է հեշտանալ: [Մասնակիցը տվյալների հավաքման բարդության աստիճանը գնահատել է 4, այսինքն՝ բարդ:]

1.4.2 Թափոնների բաղադրությունն ըստ բաժնեմասերի

- Ի՞նչ մեթոդաբանությամբ է սա արվում:
- Հետագայում կարող է հեշտանալ, եթե սկսվի տվյալներ հավաքվել: [Մասնակիցը տվյալների հավաքման բարդության աստիճանը գնահատել է 5, այսինքն՝ շատ բարդ:]

1.5.1 ԿԹ հավաքում

- Աղյուսակում պետք է ավելացնել *գերեզմանոցներից հավաքվող աղբ* սյունակը:

1.5.11 Թափոնների գործածության քարտեզ

- GIS մասնագետ եմ: [Մասնակիցն արձագանքում է ենթաբաժնում նշված տարբերակների մասով, որոնցից մեկն առաջարկվում է այն դեպքում, երբ համայնքապետարանում առկա է քարտեզագրման համակարգչային կարողություններ ունեցող անձնակազմ:]

Ընդհանուր դիտարկում է արվել նաև ամբողջ Ուղեցույցի վերաբերյալ:

- Ընդհանուր առմամբ շատ բարդ չէ: Տվյալներ տրամադրելու դեպքում (միջգերատեսչական ձևով) հնարավոր է ԿԹ կառավարման պլանը կազմել կարճ ժամանակահատվածում:

1.6 Եզրահանգումներ

Շահակիր կողմերի հանդիպման մասնակիցների կողմից տրված գնահատականների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ Ուղեցույցի կիրառելիության բարդությունը, ըստ լրացնելու և տվյալների հավաքման բարդության աստիճանի, գնահատվում է միջինին մոտ: Ուղեցույցի կիրառման համար անհրաժեշտ տվյալների հավաքումը հիմնականում գնահատվել է որպես ավելի բարդ, քան այն լրացնելը:

Հանդիպման ընթացքում մասնակիցները կարծիք հայտնեցին, որ համապատասխան մեխանիզմների առկայության դեպքում անհրաժեշտ տվյալների հավաքումը դժվար չի լինի: Բազմիցս նշվել է իրավաբանական անձանց կողմից տվյալներ տրամադրելու ցանկության բացակայության մասին: Որպես լուծում առաջարկվել է համապատասխան օրենսդրական կարգավորումների մշակումն ու կիրարկումը:

Մասնակիցները շեշտելեն նաև համայնքապետարաններում ԿԹ կառավարման պլանավորման հետ կապված կարողությունների բարձրացման կարևորությունը և հայտնել պատրաստակամություն՝ աջակցելու ծրագրի շրջանակներում անցկացվող վերապատրաստման կարիքների գնահատմանը և ցանկացած այլ գործողության, որ կնպաստի այդ կարողությունների զարգացմանը:

Ուղեցույցի առանձին ենթաբաժիններ կլրամշակվեն՝ հիմք ընդունելով սույն գնահատման վիճակագրական արդյունքները, ինչպես նաև մասնակիցների համապատասխան դիտարկումները և նշումները:

3. Վերապատրաստման կարիքների գնահատման (ՎԿԳ) բովանդակության և կառուցվածքի քննարկման արդյունքներ

Ծրագրի հիմնական գործողություններից մեկը համայնքներում նոր մշակվելիք Ուղեցույցը կիրառելու համար կարողությունների և վերապատրաստման կարիքների գնահատումն էր: Այդ նպատակով ծրագրի փորձագիտական թիմի կողմից մշակվել էր վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար:

Բազմաշահակիր կողմերի հանդիպման ժամանակ մասնակիցներին ներկայացվել և նրանց հետ քննարկվել են մշակված ՎԿԳ հարցաշարի *նախնական* բովանդակությունն ու կառուցվածքը: Մասնակիցները բազմիցս բարձրաձայնեցին համայնքներում ԿԹ կառավարման հետ կապված կարողությունների զարգացման և վերապատրաստումների սուր անհրաժեշտության մասին և հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու դրան ուղղված ցանկացած գործողության: ՎԿԳ հարցաշարի վերաբերյալ հնչեցին մի քանի դիտարկումներ և առաջարկներ, որոնց հիման վրա այն լրամշակվել և վերջնականացվել է հետագա շրջանառման նպատակով:

ՎԿԳ հարցաշարը մարզպետարանների միջոցով շրջանառվել է համայնքապետարանների շրջանակում՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անմիջական համակարգմամբ: Համայնքապետարանների՝ հարցաշարը լրացնելուն աջակցել է ծրագրի փորձագիտական թիմը:

Համայնքներում նոր մշակվելիք Ուղեցույցը կիրառելու համար կարողությունների և վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքները ներկայացվում են առանձին զեկույցում, որը հասանելի է ծրագրի կայքէջում՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines/:

ՎԿԳ հարցաշարի բովանդակությունն ու կառուցվածքը ներկայացված են Հավելված Բ-ում:

Հավելված Ա – Շահակիր կողմերի հանդիպման օրակարգ

Ամսաթիվ՝ փետրվարի 26 և 27, 2021թ.
Վայր՝ «Պարկ Ռեզորթ Աղվերան» հյուրանոց (հասցե՝ Կոտայքի մարզ, Արզական համայնք, Անտառային փող. 1-ին փակուղի)

Ծրագիրը հոգում է մասնակիցների տեղափոխման և գիշերակացի հետ կապված ծախսերը: Հեռավոր մարզերից ժամանող մասնակիցներին առաջարկում ենք միջոցառման վայր մեկ օր առաջ (փետրվարի 25) ժամանելու հնարավորություն:
Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել միջոցառման համակարգողներ Մարգարիտա Թերզյանի (+374 98 96 99 76, mterzyan@urbanfoundation.am) կամ Արմինե Թուխիկյանի (+374 91 436104, atukhikyan@yahoo.com) հետ:

ՕՐ 1 - Տեղական ԿԹ կայուն կառավարման պլանավորում Փետրվարի 26, 2021թ.		
Ժամ	**Սեսիա**	**Խոսնակ/Մոդերատոր/ Հաստատություն**
10.30 - 11.00	Գրանցում	
11.00 - 11.10	Բացման խոսք	ՏԿԵ նախարարություն
11.10 - 11.20	Ծրագրի հակիրճ ներկայացում	ՀԱՀ
11.20 - 11.50	ԿԹ տեղական կառավարման պլանավորման հայաստանյան փորձ (ներկայացում+քննարկում)	Ուրբան Հիմնադրամ
11.50 - 12.20	ԿԹ տեղական կառավարման պլանավորման միջազգային փորձ (ներկայացում+քննարկում)	ՀԱՀ
12.20 - 12.30	Սուրճի ընդմիջում	
12.30 - 13.00	Ուղեցույցի աշխատանքային նախագծի ներկայացում (ներկայացում+քննարկում)	ՀԱՀ
13.00 - 14.00	Ուղեցույցի աշխատանքային նախագծի գնահատում (խմբային աշխատանք)	ՀԱՀ, Ուրբան Հիմնադրամ
14.00 - 15.00	Ճաշի ընդմիջում	
15.00 - 16.00	Ուղեցույցի գնահատման արդյունքների քննարկում	ՀԱՀ, Ուրբան Հիմնադրամ
16.00 - 16.15	Սուրճի ընդմիջում	
16.15 - 17.00	Ուղեցույցի կիրառման մարտահրավերների (ռեսուրսներ և կարողություններ) քննարկում	ՀԱՀ, Ուրբան Հիմնադրամ
17.00 - 17.30	Ամփոփիչ քննարկում	ՀԱՀ, Ուրբան Հիմնադրամ

ՕՐ 2 - ԿԹ տեղական կառավարման օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգ Փետրվարի 27, 2021թ.

Ժամ	**Սեսիա**	**Խոսնակ/Մոդերատոր/ Հաստատություն**
10.30 - 11.00	Գրանցում	
11.00 - 11.10	Բացման խոսք	ՏԿԵ նախարարություն
11.10 - 11.20	Ծրագրի հակիրճ ներկայացում	ՀԱՀ
11.20 - 11.30	Նախորդ օրվա քննարկումների հակիրճ ամփոփում (ներկայացում)	ՀԱՀ, Ուրբան Հիմնադրամ
11.30 - 12.00	Հայաստանում ԿԹ տեղական կառավարման օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգ (ներկայացում)	Ուրբան Հիմնադրամ
12.00 - 12.15	Սուրճի ընդմիջում	
12.15 - 13.30	Հայաստանում ԿԹ տեղական կառավարման օրենսդրական բացերի և խոչընդոտների գնահատում (խմբային աշխատանք)	Ուրբան Հիմնադրամ, ՀԱՀ
13.00 - 14.00	Ճաշի ընդմիջում	
14.00 - 15.00	Հայաստանում ԿԹ տեղական կառավարման ինստիտուցիոնալ բացերի և խոչընդոտների գնահատում (խմբային աշխատանք)	Ուրբան Հիմնադրամ, ՀԱՀ
15.00 - 15.15	Սուրճի ընդմիջում	
15.15 - 16.30	Ամփոփիչ քննարկում	Ուրբան Հիմնադրամ, ՀԱՀ

Հավելված Բ – Վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար

Թափոնների կառավարման համայնքային պլաններ պատրաստելու կարիքի գնահատում

Հարցաշար (համայնքներ)

Սույն հարցումն արվում է «Կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման կարիքների գնահատում» ծրագրի շրջանակներում:

1. **Նշել մարզը**_____

2. **Նշել համայնքը**_____

Ընդհանուր տեղեկություններ

1.1 Պլանավորման ի՞նչ փաստաթղթեր են մշակվում համայնքում (նշել համապատասխան վանդակներում):

Համայնքի հնգամյա զարգացման պլան	
Տարեկան աշխատանքային պլան	
Աղբահանության պլան	
Տնտեսական զարգացման պլան	
Այլ (մանրամասնել)	

1.2 Համայնքապետարանի բաժինները/ ստորաբաժանումները, որոնք ներգրավված են պլանավորման գործընթացում (նշել համապատասխան վանդակներում):

Համայնքի ղեկավարի աշխատակազմ	
Կումունալ բաժին	
Տնտեսական զարգացման բաժին	
Այլ (մանրամասնել)	

1.3 Քանի՞ մասնագետ են ներգրավվում պլանավորման գործընթացում (նշել թիվը)

1.4 Համայնքում մշակվե՞լ է աղբահանության (կամ թափոնների կառավարման) առանձին ռազմավարական պլան, որպես առանձին փաստաթուղթ: (Զարգացման պլանում տեղ գտած աղբահանության սխեմաները չեն համարվում առանձին աղբահանության պլան:)

Այո	Ոչ

Եթե մշակվել է առանձին աղբահանության պլան

2.1 Քանի՞ աշխատակից է ներգրավված պլանավորման մեջ: (նշել թիվը)

2.2 Միջին հաշվով որքա՞ն է տևում պլանավորման գործընթացը: (նշել օրերի թիվ)

2.3 Ի՞նչ քայլեր եք իրականացնում պլանը մշակելիս (նշում կատարեք տողերի դիմաց)

Պլանի մշակման ուղեցույցի կիրառում	
Համայնքի շահակիրների հետ հանդիպումներ	
Խնդիրների վերհանում	
Վերհանված խնդիրներից առաջնահերթությունների որոշում	
Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն	
Նպատակների և թիրախների սահմանում	
Լոգիստիկ և տնտեսական հաշվարկ	
Այլ (մանրամասնել)	

Վերապատրաստման կարիքներ

3.1 Երբևէ անցկացվե՞լ է պլանավորման գծով վերապատրաստում (նշել այո կամ ոչ)	
Եթե վերապատրաստում անցկացվել է, ապա՝	
3.2 Քանի՞ աշխատակից է վերապատրաստվել (նշել թիվը)	
3.3 Քանի՞սն են ներկայում աշխատում (նշել թիվը)	

3.4 Ում կողմից է իրականացվել վերապատրաստումը (նշել կազմակերպության անունը)	

3.5 Թափոնների կայուն կառավարման ի՞նչ սկզբունքների և գործիքների եք ծանոթ կամ կիրառում (ծանոթ չեմ/ ծանոթ եմ, բայց չեմ կիրառում/ կիրառում եմ)

Աղտոտողը վճարում է սկզբունք	
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն	
Թափոնների ստորակարգում	
Թափոնների կառավարման մասնակցային բյուջետավորում	
Կատարողական հիմքով պայմանագրերի կիրառում? (Performance based contracting)	
Կանաչ գնումներ թափոնների ոլորտում	
Թափոնների կրճատման ծրագրեր	
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման խթաններ	

3.6 Ինչպե՞ս կգնահատեք թափոնների կառավարման հետևյալ թեմաների շուրջ Ձեր համայնքապետարանում/մարզպետարանում ներկայիս գիտելիքների և կարողությունների մակարդակը: 0՝ բացակայում է, 1՝ թերի է, 2՝ բավարար է, 3՝ գերազանց է

Թեմաներ	**0**	**1**	**2**	**3**
Կոշտ թափոնների գոյացման կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների տեսակավորման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների հավաքման օպտիմալացում				
Կոշտ թափոնների վերամշակման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների կոմպոստացման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների այլ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				

Խոշոր եզրաչափերի թափոնների գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայրերի կայուն կառավարում (ստեղծում, շահագործում, փակում)				
Համայնքում թափոնների չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակներ				
Թափոնների թերի կառավարման վերահսկողություն				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները հանրային առողջության վրա				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները շրջակա միջավայրի վրա				
Թափոնների թերի կառավարման սոցիալ-տնտեսական ազդեցություններ				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները կլիմայի փոփոխության վրա				
Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակներ				
ՊՄՀՀ պայմանագրերի արդյունավետ կիրառում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տվյալների հավաքագրման մեխանիզմներ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տեսակներ և դրանց կառավարման առանձնահատկություններ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների բաղադրության գնահատում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների կառավարման հիմնական դերակատարներ և նրանց դերը				
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն որպես կոշտ թափոնների կառավարման արդյունավետ միջոց				
Թափոնների կայուն կառավարման Ֆինանսավորում և բյուջետավորում (ներառյալ մասնակցային)				
Թափոնների կառավարման պլանավորման մեջ հանրային մասնակցության ապահովման				

3.7 Ինչի՞ վերաբերյալ վերապատրաստման կարիքներ ունեք թափոնների կառավարումը առավել արդյունավետ համար (նշում կատարեք տողերի դիմաց):

Մշակվելիք պլանի կառուցվածք և բովանդակություն	
Պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմ	

Պլանավորման մեջ SS միջոցների կիրառում	
Պլանավորման մեթոդաբանություն	
Այլ (մանրամասնել)՝	

3.8 Վերապատրաստման նախընտրելի ձևաչափը (նշում կատարել ստորև բոլոր այն տողերի դիմաց, որոնք համապատասխանում են)

Լսարանային (ոչ հեռավար)	
Աշխատավայրում (ոչ հեռավար)	
Հեռավար	
Բոլոր տարբերակներն ընդունելի են	

Եթե չի մշակվել առանձին աղբահանության պլան

2.5 Որո՞նք են աղբահանության պլաններ չունենալու պատճառները (նշում կատարել ստորև՝ համապատասխան տողի դիմաց)

Ժամանակի սղություն	
Մարդկային ռեսուրսների սակավություն	
Մասնագետի, գիտելիքի, հմտությունների պակաս	
Աղբահանության առանձին պլանի կարիք չի եղել	
Այլ (մանրամասնել)՝	

Վերապատրաստման կարիքներ

3.1 Երբևէ անցկացվե՞լ է պլանավորման գծով վերապատրաստում (նշել այո կամ ոչ)	
Եթե վերապատրաստում անցկացվել է, ապա՝	
3.2 Քանի՞ աշխատակից է վերապատրաստվել (նշել թիվը)	
3.3 Քանի՞սն են ներկայում աշխատում (նշել թիվը)	
3.4 Ում կողմից է իրականացվել վերապատրաստումը (նշել կազմակերպության անունը)	

3.5 Թափոնների կայուն կառավարման ի՞նչ սկզբունքների և գործիքների եք ծանոթ կամ կիրառում (ծանոթ չեմ/ ծանոթ եմ, բայց չեմ կիրառում/ կիրառում եմ)

Աղտոտողը վճարում է սկզբունք	
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն	
Թափոնների ստորակարգում	
Թափոնների կառավարման մասնակցային բյուջետավորում	
Կատարողական հիմքով պայմանագրերի կիրառում? (Performance based contracting)	
Կանաչ գնումներ թափոնների ոլորտում	
Թափոնների կրճատման ծրագրեր	
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման խթաններ	

3.6 Ինչպե՞ս կգնահատեք թափոնների կառավարման հետևյալ թեմաների շուրջ Ձեր համայնքապետարանում/մարզպետարանում ներկայիս գիտելիքների և կարողությունների մակարդակը: 0՝ բացակայում է, 1՝ թերի է, 2՝ բավարար է, 3՝ գերազանց է

Թեմաներ	**0**	**1**	**2**	**3**
Կոշտ թափոնների գոյացման կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների տեսակավորման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Կոշտ թափոնների հավաքման օպտիմալացում				

Կոշտ թափոնների վերամշակման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների կոմպոստացման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Օրգանական թափոնների այլ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Համայնքում գոյացող վտանգավոր կոշտ թափոնների անվտանգ գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Խոշոր եզրաչափերի թափոնների գործածության եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայր հեռացվող թափոնների քանակների կրճատման եղանակներ և դրանց խթանման գործիքներ				
Աղբավայրերի կայուն կառավարում (ստեղծում, շահագործում, փակում)				
Համայնքում թափոնների չնախատեսված վայրերում թափոնների տեղադրման կանխարգելման եղանակներ				
Թափոնների թերի կառավարման վերահսկողություն				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները հանրային առողջության վրա				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները շրջակա միջավայրի վրա				
Թափոնների թերի կառավարման սոցիալ-տնտեսական ազդեցություններ				
Թափոնների թերի կառավարման ազդեցությունները կլիմայի փոփոխության վրա				
Համայնքում հանրային իրազեկության բարձրացման եղանակներ				
ՊՄՀՀ պայմանագրերի արդյունավետ կիրառում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տվյալների հավաքագրման մեխանիզմներ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների տեսակներ և դրանց կառավարման առանձնահատկություններ				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների բաղադրության գնահատում				
Համայնքում գոյացող կոշտ թափոնների կառավարման հիմնական դերակատարներ և նրանց դերը				
Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն որպես կոշտ թափոնների կառավարման արդյունավետ միջոց				
Թափոնների կայուն կառավարման Ֆինանսավորում և բյուջետավորում (ներառյալ մասնակցային)				

Թափոնների կառավարման պլանավորման մեջ հանրային մասնակցության ապահովման				

3.7 Ինչի՞ վերաբերյալ վերապատրաստման կարիքներ ունեք թափոնների կառավարումը առավել արդյունավետ համար (նշում կատարեք տողերի դիմաց):

Մշակվելիք պլանի կառուցվածք և բովանդակություն	
Պլանավորման համար անհրաժեշտ գործիքակազմ	
Պլանավորման մեջ ՏՏ միջոցների կիրառում	
Պլանավորման մեթոդաբանություն	
Այլ (մանրամասնել)՝	

3.8 Վերապատրաստման նախընտրելի ձևաչափը (նշում կատարել ստորև բոլոր այն տողերի դիմաց, որոնք համապատասխանում են)

Լսարանային (ոչ հեռավար)	
Աշխատավայրում (ոչ հեռավար)	
Հեռավար	
Բոլոր տարբերակներն ընդունելի են	